ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՒՅԺԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 19 - 20 (16516) ՇԱԲԱԹ, 11 ՄԱՐՏԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՊՐԵՍՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ» ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆՊԱՏԱԿԸ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆԸ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄՆ Է»

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին «Ռուսթավի 2» հեռուստաընկերության շուրջ ծավալված իրադարձությունների կապակցությամբ հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ բարձրացրեց մամուլի օմբուդսմենի ինստիտուտի հիմնման գաղափարը եւ, այդ հարցում համագործակցության համար, հրավիրեց աշխարհում հեղինակավոր իրավապաշտպաններին, մամուլի փորձագետներին ու մասնագետներին:

Վարչապետը այդ գաղափարը ներկայացրեց նաեւ երկրի ոչ կառավարական հատվածի ներկայացուցիչներին: Նրա խոսքով, նախաձեռնության նպատակն է ապահովել առավելագույն թափանցիկ պլյուրալիստական մամուլի միջավայր եւ վերացնել բոլոր հարցականները, որոնք առնչվում են խոսքի ազատությանը:

- Նախ ցանկանում եմ նշել, որ մենք հարգում ենք եվրոպական ինստիտուտների որոշումները, հանձնարարականներն ու կարծիքը, ինչով նրանք նշանակալի ավանդ են ներդնում մեր երկրի ժողովրդավարական զարգացման գործում: Հենց նման

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

ՔՆՆԱՐԿՎԵԾԻՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Մարտի 9-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մեկօրյա պաշտոնական այցով գտնվում էր Իտալիայում:

Վրաստանի եւ Իտալիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակի առթիվ անցկացված այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ Իտալիայի վարչապետ Պաուլո Ջենտիլոնեյի, երկրի սենատի նախագահ Պետրո Գրասիի, Իտալիայի կառավարության անդամների հետ: Վարչապետի այցի շրջանակներում, անցկացվեց վրաց-իտալական բիզնես-ֆորում, որին մասնակցեց ավելի քան 250 ընկերություն:

Իտալիայի բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին առեւտրատնտեսական եւ ներդ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՔՎԵՆ՝ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆԸ

Մարտի 9-ին Վրաստանի Ուղղափառ եկեղեցու Սուրբ Սինոդի նիստում վստահության քվե հանձնվեց, այսպես կոչված, «ցիանիդի» գործով տարվող հետաքննությանը:

Սուրբ Սինոդի կողմից ընդունած որոշման մեջ նշվում է, որ իրենք հուսով են, որ հետաքննությունը կանցկացվի առավելագույնս թափանցիկ:

Սինոդի օրակարգում քննարկվեց նաեւ ավագ երեց Գիորգի Մամալաձեի քրեական գործի թեման եւ քննարկման արդյունքում որոշվեց, որ, ելնելով սույն գործի առթիվ հասարակական բարձր հետաքրքրությունից, հետաքննությունը կտարվի օբյեկտիվ եւ առավելագույնս թափանցիկ:

Սուրբ Սինոդի մեկ այլ որոշմամբ, ճղոնդիդելի միտրոպոլիտ Պետրեն ազատվել է պատրիարքության հեռուստաընկերության ղեկավարությունից: Նրան արգելված է առնչվել լրագրողների հետ: Ճղոնդիդելի Միտրոպոլիտ Պետրեի «Էրթսուլովնեբա» հեռուստաընկերության ղեկավարությունից ազատելու փաստը բողոքարկել են այդ հեռուստաընկերության աշխատակիցները: Նրանք հատուկ ուղերձ են հղել Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդին՝ խնդ-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

«ՌՈՒՍԹԱՎԻ 2» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳԻ ԴԱՏԱՐԱՆԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԿԱՆԳՆԵՑՐԵԼ Է «ՌՈՒՍԹԱՎԻ 2»-Ի ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՎՃԻՌԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, մարտի 2-ին Վրաստանի Գերագույն դատարանը, դռնփակ քննարկելով «Ռուսթավի 2»-ի սեփականության հարցը, անփոփոխ էր թողել ստորին ատյանների դատարանների որոշումը, ըստ որի, հեռուստաընկերության սեփականատեր էր ճանաչվում գործարար Քիբար Խալվաշին:

«Ռուսթավի 2» հեռուստաընկերության դատապաշտպանները վերոնշյալ որոշումը բողոքարկեցին մարդու իրավունքների Եվրոպական դատարանում: Մարտի 7-ին Ստրասբուրգի դատարանը նախնական որոշում ընդունեց, ըստ որի, Վրաստանի Գերագույն դատարանի որոշումը ժամանակավորապես կանգնեցվելու է մինչեւ մարդու իրավունքների դատարանի կողմից գործի լիարժեք քննարկումը:

Ինչպես հայտարարեց «Ռուսթավի 2» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն Նիկա Գվա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳՈՎ ԵՐԿՐՆԵՐԻ ՅՈՒՅԱԿՈՒՄ

Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը տարածել է հաղորդագրություն, որ մարտի 8-ին Եվրամիության պաշտոնական հանդեսում հրապարակվել են այն կարգավորման փոփոխությունները, որով առանց այցեգրերի Եվրամիություն այցելող երկրների ցուցակում մտցվել է Վրաստանը:

- Վրաստանի բոլոր քաղաքացիներին շնորհավորում ենք այս կարեւոր որոշման առթիվ: Եվրամիության երկրների հետ անայցեգիր ռեժիմի սահմանումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը, գործարար կապերի խորացմանը, ուսանողների փոխանակման ծրագրերի ակտիվացմանը,- ասված է գերատեսչության հաղորդագրության մեջ:

Դիվանագիտական գերատեսչության տեղեկատվությամբ, սույն կարգավորումն ուժի մեջ կմտնի հրապարակումից 20 օր անց՝ մարտի 28-ին:

Դրանում նշված է, որ առանց այցեգրերի Եվրամիության երկրներ ուղեւորություններից կարող են օգտվել Հարավային Օսեթիայում եւ Աբխազիայում բնակվող Վրաստանի քաղաքացիները:

(Խորագրի շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՍԿՍՈՒՄ ԵՆՔ «ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐԻՆՍ Է» ԳՈՐԾԸՆԹԱՑԸ»

Սահմանադրության վերանայման գործընթացի նկատմամբ առավել բարձր մակարդակի վստահության հաստատման եւ այդ գործընթացում հասարակայնության ներգրավման նպատակով, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու նախաձեռնությամբ, մարտի 10-ին, նախագահական նստավայրում, տեղի ունեցավ «Սահմանադրությունը բոլորինս է» քարոզարշավի շնորհանդեսը, որին ներկա էին քաղաքական կուսակցությունների, տեղական եւ միջազգային կազմակերպությունների, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները: Միջոցառմանը չներկայացան կառավարության, խորհրդարանական մեծամասնության ներկայացուցիչները, ինչպես նաեւ սահմանադրական հանձնաժողովի անդամները:

Իր ելույթում, Վրաստանի նախագահը ներկայացրեց իր հայեցակետը սահմանադրական փոփոխությունների հարցում: Գիորգի Մարգվելաշվիլու համոզմամբ, հասարակությունը պետք է ակտիվորեն ներգրավվի սահմանադրության քննարկմանը:

- Որպեսզի սահմանադրությունը վերածենք համընդհանուր համաձայնության փաստաթղթի, մենք սկսում ենք «Սահմանադրությունը բոլորինս է» գործընթացը,- հայտարարեց նախագահը եւ հավելեց, որ այդ ենթատեքստում բոլորին կտրվի իր դիրքորոշումը ներկայացնելու հնարավորություն:

- Համոզված եմ, որ այս գործընթացով նշանակալիորեն կաջակցենք սահմանադրական հանձնաժողովին, նրան հստակորեն կհասցնենք այդ փաստաթղթի գլխավոր պատվիրատուի, գլխավոր ոգեշնչողի ձայնն ու կարծիքը,- ընդգծեց նախագահը:

(Խորագրի շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԿՎԵՐԱՆՈՐՈԳՎԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքի նախարարության ավտոմոբիլային ճանապարհների դեպարտամենտը ծրագրվում է նորոգել այն ճանապարհը, որը տանում է դեպի վրաց-հայկական եւ վրաց-ադրբեջանական սահմաններ:

Նախագիծն իրականացվում է Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Արեւելք - Արեւմուտք արագընթաց մայրուղու բարեկարգման նախագծի շրջանակներում: Այս փուլում Ռուսթավի - Սադախլո (վրաց-հայկական սահման) եւ Ռուսթավի - Կարմիր կամուրջ (վրաց-ադրբեջանական սահման) ավտոմայրուղիների համար սկսվում են նախագծման աշխատանքները:

Նախագծային աշխատանքների ավարտման ժամկետը 17 ամիս է, իսկ դրանց արժեքը կազմում է 1,7 միլիոն եվրո եւ 1,8 միլիոն լարի (շուրջ 689 հազար դոլար): Աշխատանքների կատարման հայտամրցույթը կհայտարարվի նախագծման ավարտից հետո: Նշված հատվածները Վրաստանի տարածքային բարեկարգման նախագծի բաղկացուցիչ մասն են, որոնք երկրի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին ներկայացրել է 2016 թվականի աշնանը:

ԱՅՑ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)



րումային ներուժի առավել ակտիվացման հետ առնչվող հարցերը, քննարկվեցին գյուղատնտեսության, էներգետիկայի եւ զբոսաշրջության ոլորտներում համագործակցության հեռանկարները: Կողմերը անդրադարձան նաեւ մշակույթի, կրթության, պաշտպանության ու անվտանգության ոլորտներում համագործակցությանը, քննարկեցին ՆԱՏՕ-ում եւ Եվրամիությունում Վրաստանի ինտեգրման հետ առնչվող հարցը:

Այցի շրջանակներում անցկացված վրաց-իտալական բիզնես-ֆորումի ընթացքում, մի շարք մասնավոր ընկերությունների, ինչպես նաեւ Իտալիայի առեւտրական պալատի եւ Վրաստանի առեւտրաարդյունաբերական պալատի միջեւ ստորագրվեցին համագործակցության մի քանի հուշագրեր:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՊՐԵՍՕՄԲՈՒԴՍՄԵՆԻ» ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆՊԱՏԱԿԸ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆԸ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վերաբերմունք ունենք նաեւ «Ռուսբավի 2»-ի հարցում մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ժամանակավոր միջոցների կիրարկման մասին որոշման նկատմամբ: Միաժամանակ, ցանկանում եմ բոլորին հիշեցնել եւ ընդգծել, որ մեր կառավարությունը գործով հաստատել է իր հավատարմությունը ժողովրդավարական արժեքներին, ինչը բազմիցս ընդունվել է միջազգային ժողովրդավարական ինստիտուտների կողմից: Այդ մասին է վկայում նաեւ մեր միջազգային վարկանիշը:

Դատարանի գերակայությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ խոսքի եւ արտահայտման ազատությունը, դատարանի անկախությունը՝ այս ամենը մեր կառավարության քաղաքականության արդյունքն է, ու մեր երկրի եւ ժողովրդի գլխավոր ձեռքբերումը, ինչի պաշտպանումն ու պահպանումը մեր հիմնական առաջնահերթությունն է,- հայտարարեց վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

Վարչապետն ընդգծեց, որ խոսքի եւ արտահայտման ազատության բազմակարծության պաշտպանությունը համապատասխանում է կառավարության շահերին, ուստիեւ այդ ոլորտում ոչ մի հարցական չպետք է լինի:

- Այդ պատճառով էլ առաջարկում եմ հիմնել մամուլի օմբուդսմենի ինստիտուտ եւ դրանում հրավիրել աշխարհում բարձր վարկանիշից օգտվող իրավապաշտպանների: Ես հրապարակայնորեն համագործակցության եմ հրավիրում եվրոպական մեդիա փորձագետներին եւ համաշխարհային մակարդակի մասնագետների, ովքեր իրենց գործունեությամբ եւ աշխատանքով ապացուցել են իրենց արհեստավարժությունը: Այդ ինստիտուտը մշտապես անցկացնելու է ուսումնասիրություններ, երկրում մեդիա միջավայրի վերահսկողություն, եւ դա առնչվելու է ինչպես «Ռուսբավի 2»-ին, այնպես էլ՝ հանրային հեռուստատեսությանն ու, ընդհանրապես, ողջ լրատվատարածքին:

Մենք պատրաստ ենք համագործակցության համար, շահագրգռված ենք մեր ինստիտուտների պաշտպանության եւ ուժեղացման հարցում ու հնարավոր ամեն ինչ կանենք, որպեսզի մեր երկրի զարգացումը հիմնված լինի եվրոպական եւ ժողովրդավարական արժեքների վրա,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ԿՐԹԱԿԱՆ

ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՎՈՒՄ Է ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը աշխատում է դպրոցների համար էքսկուրսիաների օբյեկտների տեղեկագրքի մշակման շուրջ: Ինչպես հայտարարեց կրթության նախարար Ալեքսանդր Ջեջելավան, էքսկուրսիաները կդառնան ազատ դասերի բաղկացուցիչ մասը:

- Մեր նպատակն է, որպեսզի էքսկուրսիաներն իրենց բովանդակությամբ չսահմանափակվեն մոմեր վառելով եւ հավի միս ուտելով:

Դրանք համատեղելու են ինչպես դասը, այնպես էլ՝ ժամանցը: Մենք մշակում ենք էքսկուրսիաների ծրագրեր: Էքսկուրսիան կդառնա ազատ դասերի նախաձեռնության բաղադրամասը՝ անկախ նրանից, թե դրանք որտեղ կանցկացվեն: Մենք ցանկանում ենք օգնել մանկավարժներին եւ նրանց կվճարենք կոնկրետ ակտիվության համար: Մենք կունենանք նաեւ էքսկուրսիաներ ընդունող կազմակերպությունների ցուցակը, որոնք կունենան հատուկ տարածքներ երեխաների համար: Այս տարվա տեղեկագրքում արդեն կներառվեն հարյուր կազմակերպություններ: Դպրոցի ներկայացուցիչները կարող են հեռախոսով կապվել նրանց հետ ու պայմանավորվել: Մեր նախաձեռնությունը լայն պաշտպանության է արժանացել արդարադատության գերատեսչությունում, ինչպես նաեւ թանգարանների, թատրոնների, մարզական հաստատությունների կողմից: Կարծում եմ, եթե այս տարի մենք ունենանք հարյուր օբյեկտ, ապա հաջորդ տարի այդ թիվը կհասցնենք հազարի: Կլինեն տեղեկագրքի ինչպես օնլայն, այնպես էլ՝ տպագիր տարբերակներ, որտեղ հստակորեն նշված կլինի, թե ուր կարելի է գնալ, եթե կա կոնկրետ ցանկություն եւ գաղափար: Այդ ամենը հետաքրքիր կլինի ինչպես արհեստավարժության տեսանկյունից, այնպես էլ՝ այլ առումներով,- հայտարարեց Ալեքսանդր Ջեջելավան:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՓԱՍՏԵՐ

Մարտի 9-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով Վրաստանի պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանում Եվրամիության ներկայացուցիչ Յանուշ Հերմանի, Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցչի քաղաքական խորհրդական Բյորն Կոնսի եւ Եվրամիության դիտորդական առաքելության ղեկավար Կյաստուտ Յանկաուսկասի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին Վրաստանի բռնազավթված տարածքներում առկա իրավիճակի, այդ թվում՝ մարդու իրավունքների խախտման փաստերին, ինչպես նաեւ բռնազավթված գոտու երկայնքով ստեղծված իրավիճակի հետ առնչվող հարցերը: Պետնախարարը հյուրերի ուշադրությունը բեւեռեց աբխազական վարչական սահմանագծում Օրսանտիա-Օտոբաիա եւ Խուրչա-Նաբակեւի անցակետերի փակման փաստի վրա:

- Աբխազական դե-ֆակտո իշխանության կողմից, այսպես կոչված, անցակետերի փակումը անընդունելի է եւ ուղղված մարդկանց շահերի դեմ: Կրկին անգամ կոչ եմ անում այդ գործընթացում ներգրավել բոլոր կողմերին ու մասնակիցներին, հստակեցնել այդ քայլերի հետեւանքները ողջ երկրամասի բնակչության համար,- հայտարարեց Քեթեւան Ցիխելաշվիլին: Նա խոսեց նաեւ Վրաստանի կառավարության խաղաղասիրական քաղաքականության, հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում Եվրամիության եւ դիտորդական առաքելությունների ներգրավման նշանակության մասին: Կողմերը քննարկեցին նաեւ առաջիկա համագործակցության հետ առնչվող հարցեր:



ԳԵՐՄԱՆԻԱ «ԽՈՐ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը Թուրքիայի հետ «խորը տարաձայնությունների» առկայություն է արձանագրել Գերմանիայում թուրք քաղաքական գործիչների ելույթների հետ կապված սկանդալի ֆոնին:

- Եվրամիության եւ Թուրքիայի միջեւ, Գերմանիայի եւ Թուրքիայի միջեւ գոյություն ունեն «խորը տարաձայնություններ». մենք դա այսօր զգում ենք ինչպես երբեք,- ասաց Մերկելը: Գերմանիայի կանցլերը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանից պահանջեց դադարեցնել իրենց երկիրը նացիստական անվանելուց:

Նշենք, որ Գերմանիայի Համբուրգ քաղաքի Plaza Event Center սրահում նախատեսված Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեւլութ Չավուշօղլուի միջոցառումը, որը տեղի էր ունենալու սահմանադրական հանրաքվեի քարոզարշավի շրջանակում, չեղյալ էր համարվել: Արտգործնախարարը ստիպված էր եղել ելույթ ունենալ Թուրքիայի հյուպատոսի կեցավայրում:

Գերմանական տեղական իշխանությունները չեղյալ էին հայտարարել Թուրքիայի արդարադատության նախարար Բեքիր Բոզդաղի ելույթը Գերմանիայի Գագգենաու քաղաքում: Կատարվածի քննադատությամբ էր հանդես եկել նախագահ Էրդողանը, ով հայտարարել էր, թե Գերմանիան իր պահվածքով նմանվում է նացիստների գործելաոճին: Էրդողանի հայտարարությունը կրկնել էր նաեւ արտգործնախարար Չավուշօղլուն:

ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ ԴՈՆԱԼԴ ՏՈՒՍԿԸ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

Մարտի 9-ին Եվրոպական միության անդամ երկրների առաջնորդները 2,5 տարով երկարաձգեցին Դոնալդ Տուսկի մանդատը Եվրոպայի խորհրդի ղեկավարի պաշտոնում, չնայած Լեհաստանի ընտրությունները տեղափոխելու ցանկությանը:

Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը շնորհակալություն է հայտնել բոլոր նրանց, ովքեր պաշտպանել են իր թեկնածությունը տվյալ պաշտոնում վերընտրվելու հարցում:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ ԵՆ

Եվրամիությունը մարտի 15-ին կես տարով կերկարացնի պատժամիջոցները Ռուսաստանի եւ Ուկրաինայի հարավ - արեւելքի ինքնահռչակ հանրապետությունների 146 քաղաքացիների, ինչպես նաեւ 37 կազմակերպությունների դեմ:

Ռուսաստանի համար սեւ ցուցակը վերջին անգամ կես տարով երկարաձգվել է սեպտեմբերի 15-ին: Այն ժամանակ դրա մեջ մտնում էր 146 մարդ, ներառյալ՝ ՌԴ-ի իշխանությունների ներկայացուցիչներ, ռուսաստանցի քաղաքական գործիչներ, գործարարներ եւ ուժայիններ, ինչպես նաեւ ինքնահռչակ Դոնեցկի եւ Լուգանսկի ժողովրդական Հանրապետությունների (ԴԺՀ եւ ԼԺՀ) ղեկավարներ: Ցանկում ներառվել են 37 կազմակերպություններ, այդ թվում՝՝ ԴԺՀ-ի եւ ԼԺՀ-ի բոլոր հայտնի ռազմական եւ քաղաքական կառույցները, որոնց հետ եվրոպական բիզնեսին արգելված է որեւիցե հարաբերություն հաստատելը:

Բոլորին, ովքեր հիշատակված են ցուցակում, արգելված է ԵՄ մուտքը, իսկ նրանց ակտիվները, Եվրոպայի բանկերում դրանց հայտնաբերման դեպքում, ենթակա են սառեցման:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ ՎԱՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՔՎԵՆ՝ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րանքով, որ միտրոպոլիտ Պետրեն վերականգնվի հեռուստաընկերության տնօրենի պաշտոնում:

Հիշեցնենք, որ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի վիրահատության համար Գերմանիայում գտնվելու ժամանակահատվածում, Թբիլիսիի օդանավակայանում ձերբակալվել էր ավագ երեց Գիորգի Մամալաձեն: Նրա մոտ հայտնաբերվել էր կալիումի ցիանիտ: Դատախազության նախնական հայտարարությամբ, թույնը նախատեսված էր բարձրաստիճան հոգեւորականներից մեկի համար, թեպետ հետո այդ վարկածը ենթարկվեց փոփոխության: Օրերս դատախազությունը հրապարակեց տեսագրությունները, որոնք, ըստ դատախազության, հաստատում են ավագ երեցի հանցագործ մտադրությունները:

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԻՖԵՐԵՆՑԱՑՎԻ ԲԱՐՁՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ինչպես հայտարարեց Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտանության նախարար Դավիթ Սերգեենկոն, գերատեսչությունը ծրագրում է մոտ ժամանակներում հրապարակել բարձր եկամուտներ ունեցող քաղաքացիների համար ընդհանուր առողջապահության դիֆերենցացման մանրամասները:

- Ինչպես ցույց տվեց ցուցակների վերլուծությունը, եկամուտների առումով առաջին կարգի քաղաքացիներ են համարվում այն քաղաքացիները, ում տարեկան եկամուտը գերազանցում է 40 հազար լարին: Նրանք պաշտոնապես մուծում են շահութահարկը: Նմաններ ի թիվը հասնում է 32 հազարի: Նրանցից 20 հազարը օգտվում է մասնավոր ապահովագրությունից, իսկ 10 հազարը փորձել են ստանալ համընդհանուր ապահովագրություն: Սակայն, նրանք ունեն նյութական հնարավորություններ եւ այնպես էլ գրանցված են համընդհանուր առողջապահության պոլիսում: Հետեւաբար, առաջին դիֆերենցացումը կիրականացվի բարձր եկամուտ ունեցող քաղաքացիների նկատմամբ: Ինչ վերաբերում է մյուս կատեգորիաների եւ նոր բաղադրիչների բացահայտմանը, ինչպիսիք են ամբուլատորական դեղորայքը, ապա առաջիկա մեկ շաբաթվա ընթացքում կանցկացվի մանրամասն տեղեկատվական քարոզարշավ եւ հասարակայնությանը կներկայացնեն բոլոր նորամուծությունները,- հայտարարեց Դավիթ Սերգեենկոն:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԱՏՕ-Ի ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՍՏԱՇՐՋԱՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Մարտի 3-ին Թբիլիսիում անցկացվեց ՆԱՏՕ-ի ռազմական կոմիտեի նստաշրջանը, որի ընթացքում քննարկվեցին Վրաստանի եւ տարածաշրջանի անվտանգության, ինչպես նաեւ Վրաստանի զինված ուժերի օպտիմալացման հարցերն ու Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի ռազմական համագործակցության հարցերը:

ՆԱՏՕ-ի ռազմական կոմիտեի նախագահ, գեներալ Պետեր Պավելի խոսքով, Հյուսիսատլանտյան դաշինքի եւ Վրաստանի հարաբերություններում նկատելի է «լավ դինամիկան», կազմակերպությունը շահագրգռված է երկկողմ համագործակցության ընդլայնմամբ:

Իր հերթին, Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, բրիգադի գեներալ Վալերի Չաչիբաիան հայտարարեց, որ Թբիլիսի՝ ՆԱՏՕ-ի ռազմական կոմիտեի այցը «Վրաստանի եւ Դաշինքի համագործակցության հաջող զարգացման հաստատումն է պաշտպանական հնարավորությունների առումով»:

Երկօրյա այցի շրջանակներում, ՆԱՏՕ-ի ռազմական կոմիտեի անդամները հանդիպումներ ունեցան երկրի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու, պաշտպանության նախարար Լեւան Իզորիայի հետ:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՉՀՌՉԱԿԱԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐ՝ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՑՈՒՄԱԿԵՏԵՐՈՒՄ

Փետրվարի 27-ից մինչեւ մարտի 1-ը ներառյալ, Սադախլո ավտոճանապարհ, Նինոծմինդա եւ Սարփի սահմանային անցակետերում մաքսային աշխատակիցների կողմից հայտնաբերվել են չհռչակագրված մեծ քանակությամբ սիգարետների երկիր ներկրելու փաստեր:

Ընդհանուր առմամբ, կանխվել է 26860 սիգարետի ապօրինի ներկրման փորձ: Որպես առաջին դեպք՝ հետագա արձագանքման համար գործը փոխանցվել է ֆինանսների նախարարության հետաքննչական ծառայությանը: Իսկ իրավախախտում թույլ տված չորս քաղաքացիներից, օրենսդրության համաձայն, մաքսանենգ ապրանքը առգրավվել է եւ յուրաքանչյուրի համար սահմանվել հազար լարիի տուգանք:

Փետրվարի 26-ից մինչեւ մարտի 4-ը Վալե եւ Գարդաբանի սահմանային անցակետերում մաքսային աշխատակիցները հայտնաբերել են, ընդհանուր առմամբ, հազար հաբից ավելի թմրանյութ պարունակող չհայտագրված ապրանք: Գործի քննությունը փոխանցվել է ներքին գործերի նախարարությանը:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ինչպես տեղեկացրել է «Կոմերսանտ» ռադիոկայանը, Վրաստանում բացվում է զբոսաշրջության առաջին բուհը: «Block Georgia Group»-ի գործադիր փոխտնօրեն Թոռնիկե Ջանաշվիլու խոսքով, դեռեւս հունվարին, զբոսաշրջության կառավարման հատվածում, խոշորագույն ֆրանսիական «Vatel» համալսարանի հետ ձեւակերպվել է պայմանագիր, ըստ որի, «Georgia Group»-ին վերապահվում է Վրաստանի եւ Հայաստանի էքսկլյուզիվ իրավունքը: Նրա խոսքով, արդեն սեպտեմբերին Վրաստանի ազգային համալսարանի հետ կսկսեն առաջին ուսանողների ընդունելությունը:

Ընդհանուր առմամբ, վերոնշյալ նախագծի իրականացման համար իրականացվել է 1,5 միլիոն դոլարի ներդրում:

VTB ԲԱՆԿԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՆՈՐ ԱԿՑԻԱՆ

VTB բանկը ձեռնամուխ է եղել սպառողական նոր վարկի ակցիային: Ինչպես տեղեկացրել է բանկի մամլո ծառայությունը, ակցիայի ընթացքում սպառողները կարող են օգտվել մինչեւ 45 հազար լարիի վարկից, առանց գրավադրման եւ վարկի մարման առավելագույն ժամկետը կազմում է հինգ տարի: Սպառողական վարկ հնարավոր է ստանալ անշարժ գույքի ձեռքբերման, ինչպես նաեւ բնակարանի վերանորոգման, ավտոմեքենայի գնման, առկա պարտքերի մարման կամ անձնական այլ նպատակների համար: Ակցիան կշարունակվի մինչեւ ապրիլի 6-ը: Տոկոսադրույքը սկսվում է տարեկան 9 տոկոսից: Վարկի ստացման համար անհրաժեշտ նվազագույն եկամուտը պետք է ամսական կազմի 300 լարի:

ԿԱՐՃ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑԱՎ ԹԲԻԼԻՍԻԻ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ՍԱԿԱԳԻՆԸ

«Թբիլիսիի միկրոավտոբուսի» որոշմամբ, քաղաքում կարճ երթուղիներով երթեւեկող միկրոավտոբուսների սակագինը հավասարեցվում է մունիցիպալային տրանսպորտային միջոցների սակագնին, եւ 2017 թվականի մարտի 8-ից 40 թեթրիից հասցվել 50 թեթրիի:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(10 մարտի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

ՏԱՐԱԴՐԱՄ	ԱՌՔ	ՎԱՃԱՌՔ
ԱՄՆ ԴՈԼԱՐ	2.46	2.55
ԵՎՐՈ	2.585	2.731
ՌՈՒԲԼԻ	0.04	0.046
ԴՐԱՄ	0.0039	0.0056

Մարտի 3-ի համեմատությամբ, դոլարի կուրսը աճել է 0,035 լարիով:

ՔՐԵԱԿԱՆ

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԸ

Ֆինանսների նախարարության հետաքննչական ծառայությունը ձերբակալել է «Բժշկական գործունեության պետական կարգավորման գործակալության» դեղագործական գործունեության դեպարտամենտի պետ Դավիթ Մաճարաշվիլուն: Քրեական պատասխանատվության են ենթարկվել նաեւ հոգեբուժական դեղորայքի ներկրող երկու ընկերությունների ղեկավարները: Ինչպես պարզել է հետաքննությունը, Դավիթ Մաճարաշվիլին հոգեբուժական եւ դրանց հավասարեցված դեղորայքի քվոտաների կազմման ու դրանց ներկրման հարցում չիմնավորված առավելությունները շնորհել է այդ ընկերություններին, որի արդյունքում, երկրում շրջանառության մեջ հայտնվեց անհրաժեշտությունից շատ ավելի քանակությամբ հոգեբուժական եւ դրանց հավասարեցված դեղորայքներ:

ՕԶՈՒՐԳԵԹԻ. ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Պետական անվտանգության ծառայության հակակոռուպցիոն գործակալության եւ պետական անվտանգության դեպարտամենտի աշխատակիցների համատեղ իրականացված գործողության արդյունքում, կաշառակերության փաստով ձերբակալվել է Օզուրգեթի քաղաքի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Գելա Կոբալաձեն:

Ինչպես պարզել է հետաքննությունը, 2015-2016 թվականներին, Օզուրգեթիի քաղաքապետարանը քաղաքի վնասված փողոցների եւ ափի ամրացման աշխատանքների իրականացման համար պայմանագիր էր կնքել «Պիրամիդա» ՍՊԸ-ի հետ, որը, սակայն, ժամկետում չէր իրականացվել նախատեսված աշխատանքները: Սակրեբուլոյի նախագահ Գելա Կոբալաձեն ՍՊԸ-ի ղեկավարությանը խոստացել էր երկարաձգել պայմանագրի ժամկետները եւ փոխանցել մինչ այդ կատարած աշխատանքների համար 150 հազար լարին, որի համար պահանջել եւ ստացել էր 50 հազար լարիի կաշառք:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԿՊԱՀԱՆՋՎԵՆ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԸ ՀԱՏԵԼԻՍ

Ինչպես արդեն հաղորդել ենք, մարտի 1-ին, Բրյուսելում, Եվրամիության կառույցների կողմից հաստատվեցին այն նոր կարգավորումները, ըստ որոնց, Վրաստանին շնորհվեց անայցեգրային պայմանակարգը:

Ի՞նչ փաստաթղթեր կպահանջվեն Վրաստանի քաղաքացիներին, որպեսզի նրանք առանց որեւէ հիմնախնդրի կարողանան հատել Եվրամիության անդամ երկրների եւ Շենգենյան գոտու երկրների սահմանները:

Մարտի 28-ից ուժի մեջ մտնող անայցեգրային պայմանակարգից, առաջին հերթին, կարող են օգտվել կենսաչափական անձնագրեր ունեցող Վրաստանի քաղաքացիները, ովքեր 180 օրվա ընթացքում 90 օրը կարող են անցկացնել Եվրամիության անդամ երկրների տարածքում: Վրաստանի քաղաքացիների համար անայցեգրային պայմանակարգը հնարավորություն է ընձեռում այցելել Եվրամիության 26 երկիր, այդ միության կազմից դուրս՝ չորս երկիր: Ցուցակում բացառություն են կազմում Եվրամիության երկու անդամ երկրները՝ Մեծ Բրիտանիան եւ Իռլանդիան: Սահմանը հատելիս՝ հարկ է պարտադիր կարգով ունենալ մեկնման եւ հետդարձի տոմսերը, ապահովագրական պոլիսը, ֆինանսների առկայությունը, որը օրվա հաշվով կազմելու է մոտավորապես 50 եվրո (դա կարող է լինել կանխիկ գումար կամ բանկից տեղեկանք, որ ձեր հաշվի վրա կա համապատասխան գումար): Ի տարբերություն Եվրամիության երկրների, Շենգենյան գոտու երկրներ մուտք գործելու համար, լրացուցիչ կպահանջվի նաեւ բնակտարածքի (հյուրանոցի) ամրագրման փաստաթուղթ: Եթե մտադիր եք հանգրվանել բարեկամների կամ ազգականների մոտ, ապա պետք է ունենաք այդ անձանց հավաստող փաստաթղթերը, օրինակ, նրանց անձնական վկայականի պատճենը եւ կոնտակտային տվյալները:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԷՔՍԿԼՅՈՒԶԻՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆՆ Է»

Արձագանքելով Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու նախաձեռնությանը՝ խորհրդարանի խոսնակ Իրակլի Կոբախիձեն հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ասված է.

- Սահմանադրական փոփոխությունների հարցով քարոզարշավի առաջարկությամբ, երկրի նախագահը «կրկին իրեն հակադրում է խորհրդարանին ու պետական սահմանադրական հանձնաժողովին եւ տագնապալի անհարգալից վերաբերմունք ցուցաբերում երկրի ժողովրդավարական գլխավոր սահմանադրական ինստիտուտի նկատմամբ»:

Իրակլի Կոբախիձեի խոսքով, նախագահը հանդիպումը նշանակել է մարտի 10-ին, խորհրդարանի լիագումար նիստի անցկացման օրը, եւ որ սահմանադրական հանձնաժողովի 60 անդամներից 34-ը խորհրդարանի պատգամավորներ են եւ մարտի 10-ին պետք է զբաղվեն իրենց անմիջական պարտականությունների կատարմամբ:

- Վրաստանի օրենսդրության համաձայն, սահմանադրության վերանայման օրինանախագծի համաժողովրդական քննարկմամբ կազմակերպումը երկրի խորհրդարանի էքսկլյուզիվ իրավասությունն է: Ուստի, օրենսդրության եւ իրական տրամադրության համապատասխան, համաժողովրդական քննարկումը կարող է անցկացվել միայն նրանից հետո, երբ կմշակվի ու կներկայացվի օրինանախագիծը: Ելնելով դրանից՝ հանձնաժողովի աշխատանքի ավարտից երկու ամիս շուտ, նախագահի նախաձեռնությունը զուրկ է իրատեսական հիմքերից,- հայտարարել էր Իրակլի Կոբախիձեն:

«ՌՈՒՍԹԱՎԻ 2» ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳԻ ԴԱՏԱՐԱՆԸ ԱՆԺԱՄԿԵՏ ԿԱՆԳՆԵՑՐԵԼ Է «ՌՈՒՍԹԱՎԻ 2»-Ի ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱՎՃԻՌԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Ռուսթավի 2»-ի գործի կապակցությամբ, Եվրախորհրդարանի կազմի հիմնական քաղաքական խմբերի ներկայացուցիչները հատուկ ուղերձով դիմել են Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլուն եւ Եվրամիության ղեկավարներին: Նրանք մտահոգություն են հայտնել հեռուստաընկերության շուրջ ծավալվող իրադարձությունների կապակցությամբ: Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, անդրադառնալով «Ռուսթավի 2» հեռուստաընկերության շուրջ ծավալված իրադարձություններին, հայտարարեց, որ բացարձակապես անթույլատրելի է դատական իշխանությունների որոշման նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, ինչպես նաեւ խոսքի ազատության սահմանափակումը:

Արձագանքելով «Ռուսթավի 2»-ի գործով Ստրասբուրգի դատարանի ընդունած որոշմանը՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն անընդունելի է համարում գործի «Ռուսթավի 2»-ը Վրաստանի դեմ» ձեւակերպումը:

- «Քիբար Խալվաշին Ղարամանաշվիլիների դեմ» անվանման փոխարեն, գործը քննարկվում է «Ռուսթավի 2»-ը Վրաստանի դեմ» անվամբ, ինչն անընդունելի է: Մենք պարտավոր ենք պաշտպանել Վրաստանի եւ մեր ինստիտուտների վարկանիշը,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

ՈՐՔԱՆՈՎ Է ՊԱՐՏԱԴԻՐ ՍՏՐԱԲՈՒՐԳԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Ինչպես հայտարարեց Քաղաքականության եւ արդարադատության կենտրոնի նախագահ, փաստաբան Ամիրան Գիգուաշվիլին, եթե Ստրասբուրգի դատարանի կողմից իրականացվող միջոցառումները չավարտվեն մարտի 8-ից հետո մինչեւ այդ դատարանի կողմից «Ռուսթավի 2»-ի գործի քննարկման ավարտը ընդունած որոշման կատարման համար, ապա միակ իրավական մեխանիզմը, որը հնարավորություն կտար Քիբար Խալվաշուն հանրային ռեեստրում իրականացնել սեփականության իրավունքի վավերացումը, Վրաստանի իշխանության կողմից Ստրասբուրգի դատարանի որոշման անտեսում է:

- Մինչ օրս մենք հետեւել ենք մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիային եւ պարտավորություն ստանձնել լրիվությամբ ճանաչել Ստրասբուրգի դատարանի որոշումները, որոնք բոլոր դեպքերում ուղղված են դատական մեր համակարգում առկա թերացումների վերացմանը: Այդպես է ամենուրեք, որտեղ փոքրիշատե հավակնում են ժողովրդավարությանը: Թեպետ, կան նաեւ այլ մոտեցումներ, օրինակ, Ռուսաստանում, որտեղ Ստրասբուրգի դատարանի որոշումը լրիվությամբ կամ մասնակիորեն կարող է փոխել երկրի Սահմանադրական դատարանը,- հայտարարեց Ամիրան Գիգուաշվիլին:

ՈԼՈՐՏ

ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԽՈՒՍԱՓՈՒՄ ԱԳՐՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ներկա դրությամբ, Վրաստանում գործող շուրջ 300 հազար ֆերմերներից, ագրոապահովագրությունից օգտվում է մոտ 16 հազարը: Ընդհանուր առմամբ, ագրոապահովագրության պետական ծրագրում ներգրավվել է ֆերմերների ընդամենը 5 տոկոսը:

Վրաստանի գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալության տեղեկատվությամբ, 2014 թվականին, 2016 թվականի համեմատությամբ, ագրոապահովագրության շրջանակներում ընդգրկված ֆերմերների թիվը գերազանցեց 6 հազարով: Որպես ագրոապահովագրության նկատմամբ հետաքրքրության նվազեցման պատրվակ՝ համարվում է պետական նպաստների նվազեցումը: Թեպետ փորձագետների համոզմամբ, դրա հիմնական պատճառներից են նաեւ ագրոապահովագրության վերաբերյալ ֆերմերների քիչ տեղեկատվությունը, ինչպես նաեւ ֆերմերների ստացած վնասի գնահատման համակարգի թերացումը:

Հիշեցնենք, որ ագրոապահովագրության պետական ծրագիրը մեկնարկեց 2014 թվականի սեպտեմբերի 1-ից եւ հետապնդում է ագրոհատվածում ապահովագրական շուկայի զարգացման, գյուղատնտեսական գործունեության աջակցության վերոնշյալ գործունեությամբ զբաղվող անձանց եկամուտների պահպանման եւ ռիսկերի նվազեցման նպատակ: Պետական ծրագիրը իրականացնում է գյուղատնտեսական նախագծերի կառավարման գործակալությունը, որը ծրագրի իրականացման նպատակով պայմանագրեր է ձեւակերպում Վրաստանում օրենսդրությամբ սահմանված կարգով հավաստագրված համապատասխան ապահովագրական ընկերությունների հետ եւ այդ պայմանագրերի հիման վրա իրականացնում է ապահովագրական պոլիսների ֆինանսավորումն ու դրա մոնիտորինգը:

Ագրոապահովագրության հարցով շահագրգռված ֆերմերները ապահովագրական պոլիսներ կարող են ստանալ Վրաստանում գործող հինգ ապահովագրական ընկերություններում՝ «Ալդագի», «Ջի Պի Այի հոլդինգ», «Ասիսի խումբ», «Արդի խումբ», «Ունիսոն»:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում, ապահովագրական պոլիսով հնարավոր է մարել ապահովագրական հետեւյալ ռիսկերը՝ կարկտահարությունը, առատ տեղումները, փոթորիկը, աշնանային ցրտահարությունները (միայն ցիտրուսային մշակաբույսերի համար) սեպտեմբերի 1-ից մինչեւ նոյեմբերի 30-ը ներառյալ ժամանակահատվածում:

2016 թվականին պետական վերոնշյալ ծրագրում կատարված փոփոխությունների համաձայն, ֆերմերները կարող են

ապահովագրել մինչեւ 5 հեկտար հողատարածք (հատիկային մշակաբույսերի դեպքում՝ 30 հեկտար): Ապահովագրվածներից յուրաքանչյուրը՝ 70 տոկոսի համաֆինանսավորմամբ, կստանա ծրագրով նախատեսված բոլոր մշակաբույսերի համար նախատեսված գումարը, իսկ խաղողի համար այն նախատեսում է մինչեւ 50 տոկոսի համաֆինանսավորում: Հանրային ռեեստրում հողատարածքի գրանցման կամ արդեն գոյություն ունեցող կադաստրային կոդի առկայության դեպքում, ապահովագրության համաֆինանսավորումն ավելացվում է 10 տոկոսով:

Գործարկվել են նվազագույն եւ առավելագույն ապահովագրական սակագները: Իշխանությունում գտնում են, որ վերոնշյալ փոփոխությունները կնպաստեն ապահովագրական ընկերությունների միջեւ մրցակցության ծավալմանը եւ նրանց կողմից ապահովագրական ռիսկերի իրական գնահատմանը:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂՂՈՒՄ ԵՆ ՆԱԽՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՍԽԱԼԸ

Վրաստանի խորհրդարանը ծեռնամուխ է եղել երկրի կառավարության նախաձեռնությամբ մշակված օրենսդրական փաթեթի քննարկմանը, ըստ որի, ֆինանսական հատվածի նկատմամբ Ազգային բանկի վերահսկողության գործառույթը վերականգնվում է:

Նշենք, որ Վրաստանի կառավարությունը, ներկայացնելով վերոնշյալ օրինանախագիծը, խորհրդարանից պահանջել է այն քննարկել արագացված կարգով: Ներկայացված օրինանախագծով փոփոխություններ են նախատեսվում ներկայումս գործող 16 օրենքներում: Դրանք նախատեսում են փոփոխել բոլոր այն նորմերը, ըստ որի, ֆինանսական հատվածի նկատմամբ վերահսկողությունը պետք է իրականացնի «Հանրային իրավունքի իրավաբանական անձ» ֆինանսական վերահսկողության գործակալությունը: Հատկանշական է, որ ֆինանսական վերահսկողության գործակալությունը գործնականում ոչ մի օր չի գործել, քանի որ մեկուկես տարի առաջ դրա հիմնման համար օրենքում կատարված փոփոխությունները կանգնեցվել էին Վրաստանի Սահմանադրական դատարանի կողմից: